ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 09>> հունվար 2018թ N 3

ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ,ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ (ԾԱԾԿԱԳՐԵՐ՝ 69-2.2-24, 69-3.1-15) ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N1023-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հետևյալ քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝

1) Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ (ծածկագիր՝ 69-2.2-24) (հավելված 1).

2) Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 69-3.1-15) (հավելված 2).

2. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2017 թվականի մայիսի 26-ի N47 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետի (ծածկագիր՝ 69-2.2-18) (հավելված1) և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 69-3.1-14) (հավելված4) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից։

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ